

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«__» «_____» 2015 թվականի N __ Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ
41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 41-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
- 1) Որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի «մեկամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 41-Ա որոշման (այսուհետ՝ որոշման) թիվ 1 հավելվածում նշված վերակազմակերպվող ընկերությունների պետական գրանցման գործընթացի ժամանակ առաջացել է օրենքով սահմանված ժամկետների պահպանման խնդիր, մասնավորապես՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 36-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված կանոնադրության փոփոխությունների գրանցումը կատարվում է այդ փոփոխությունների մասին որոշումն ընդունելուց 60 օրը լրանալուց հետո և օրենքի նույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ պարտատերերի բոլոր առաջացած պահանջների բավարարման դեպքում, այն պարագայում, երբ որոշմամբ ընկերությունների վերակազմավորման գործընթացի իրականացման համար ՀՀ կառավարության կողմից սահմանվել է երկու ամիս ժամանակ:

Որոշման նախագիծը քննարկված է եղել շահագրգիռ բոլոր մարմինների հետ, սակայն վերջիններիս կողմից վերոհիշյալ խնդրի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացվել:

Գործընթացի իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն՝ ապահովելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանումը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի կամ եկամուտների փոփոխման վերաբերյալ

«Հայաստանի հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ չեն սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

«Հայաստանի հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: